ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2025թ. փետրվարի 21-ին կնքված N ՀՀՀ-ՀՄԱԱՊՁԲ-25/1-1 պայմանագրին լրացում կատարելու մասին

21-ը փետրվարի 2025թ.

ք. Երևան

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Գնորդ), ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա մի կողմից, և

«Սթեյջ Սթայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ Վաճառող), ի դեմս տնօրեն Բագրատ Դիվանյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի և 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչպես նաև Կողմերի միջև 2025թ. փետրվարի 21-ին կնքված N ՀՀՀ-ՀՄԱԱՊՁԲ-25/1-1 (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետի պահանջները, ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը համաձայնեցին.

1. Վաճառողը պարտավորվում է Գնորդին լրացուցիչ մատակարարել «Դեպի Եվրատեսիլ» մրցույթի շրջանակում մամուլի սրահի դեկորացիա (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:
2. Վաճառողը՝ Համաձայնագրում նշված Ապրանքը պարտավորվում է մատակարարել Գնորդին Պայմանագրով սահմանված հասցեով, ժամկետում և կարգով:
3. Համաձայնագրի պայմանները տարածվում են Կողմերի միջև մինչև դրա ստորագրումը՝ 2025 թվականի փետրվարի 15-ից առաջացած հարաբերությունների նկատմամբ:
4. Սույն Համաձայնագրով նախատեսված Ապրանքի ընդհանուր գինը կազմում է 654 451 (վեց հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:
5. Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Համաձայնագրի վճարման ժամանակացույցով (Հավելված 2) նախատեսված ամիսներին: Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն Համաձայնագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
6. Պայմանագրի ցանկացած դրույթ կիրառելի է սույն Համաձայնագրի նկատմամբ այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:
7. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
8. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
9. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

«Սթեյջ Սթայլ» ՍՊԸ

Բ. Դիվանյան
Տնօրեն

Հավելված 1
2025թ. փետրվարի 21-ին կնքված N ՀՀՀ-ՀՄԱՊՁԲ-25/1-1 պայմանագրին լրացում
կատարելու մասին համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	79951110	Մամուլի սրահի դեկորացիայի ապահովում	0	654 451	654 451	654 451	654 451	654 451	654 451	654 451	654 451	654 451	654 451	654 451	654 451

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

«Սթեյջ Սթայլ» ՍՊԸ

Բ. Դիվանյան
Տնօրեն